Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-830-18.02.2010-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասում “աշխատավարձի” բառը փոխարինել “կորցրած եկամուտի” բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 5-րդ հոդվածի “ա)” կետը “նպաստը” բառից հետո լրացնել “և միանվագ դրամական օգնությունը” բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը “անդամներից մեկը” բառերից հետո լրացնել “, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով,” բառերով:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը “ընթացքում” բառից հետո լրացնել “և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստի իրավունք” բառերով:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի “երրորդ եռամսյակի ընթացքում” բառերը փոխարինել “օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ընթացքում և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստի իրավունք” բառերով:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը “ընթացքում” բառից հետո լրացնել “և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստի իրավունք” բառերով:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 18-րդ հոդվածի “ընտանեկան նպաստի համակարգում” բառերը փոխարինել “ընտանիքների անապահովության գնահատման համակարգում” բառերով:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1. “դ)” կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

“դ) ընտանեկան նպաստ ստացողի կողմից ընտանեկան նպաստի չափի փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու դեպքում.”

2. “դ)” կետից հետո լրացնել նոր “դ1)” կետ հետևյալ բովանդակությամբ.

“դ1) ընտանեկան նպաստ ստացողի կողմից ընտանեկան նպաստի չափի փոփոխություն առաջացնող՝ ընտանիքի եկամուտներում կամ ընտանիքի կազմում ու պայմաններում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ հավաստի տեղեկություններով փաստաթղթեր՝ սույն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում.”.

3. «“դ)” կետի» բառերը փոխարինել «“դ) և դ1)” կետերի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 22-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի գ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) տեղեկանք ընտանիքի գտնվելու վայրում (հասցեում, կացարանում) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված բոլոր անձանց մասին.».

2. 1-ին մասի զ) կետը “մահացած երեխայի,” բառերից հետո լրացնել “մյուս երեխաների, չափահաս զավակների” բառերով.

3. 3.2 մասում “որոշվում է” բառերից հետո լրացնել “տվյալ երեխայի ծննդյան օրվա դրությամբ՝” բառերը, “կնոջ” բառը փոխարինել “անձի” բառով, “չամուսնացած” բառից հետո լրացնել “չափահաս” բառը:

ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 23-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ

“1. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ (այսուհետ՝ երեխայի խնամքի նպաստ) ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող)՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը:”.

2. 2-րդ մասի “հրամանն ուժի մեջ մտնելու ամսից” բառերը փոխարինել “(համատեղությամբ աշխատելու դեպքում՝ գործատուների, այսուհետ՝ գործատու) իրավական ակտում նշված ամսից” բառերով:

ՀՈԴՎԱԾ 11. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի “գ)” կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) տեղեկանք ծնողի գտնվելու վայրում (հասցեում, կացարանում) բնակչության պետական ռեգիստրում մինչև 2 տարեկան երեխայի հաշվառված լինելու մասին».

2. 1-ին մասի “դ)” կետում «աշխատավայրից» բառը փոխարինել «գործատուից» բառով.

3. 1-ին մասի “դ)” կետից հետո լրացնել նոր “դ1)” կետ հետևյալ բովանդակությամբ.

“դ1) երեխայի խնամքի նպաստ ստացող ծնողին՝ իր կրտսեր հաջորդ (այսուհետ՝ կրտսեր) երեխայի համար երեխայի խնամքի նպաստ նշանակվելու դեպքում՝ տեղեկանք գործատուից՝ կրտսեր երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողին տրված, ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված, ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի մասին.”.

4. 4-րդ մասից հետո լրացնել նոր 4.1 մաս հետևյալ բովանդակությամբ.

“4.1 Երեխայի խնամքի նպաստ ստացող ծնողի՝ կրտսեր երեխայի համար երեխայի խնամքի նպաստը նշանակվում է կրտսեր երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողին տրված, ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված, ժամանակավոր անաշխատունակության օրացուցային վերջին օրվա ամսվան հաջորդող ամսվա մեկից:”.

5. 7-րդ մասում «տեղեկանք բնակության վայրից և աշխատավայրից» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասի գ) և դ) կետերով նախատեսված տեղեկանքները» բառերով.

6. 10-րդ մասի “գ)” կետի “աշխատանքի վերադառնալու” բառերը փոխարինել “աշխատելու” բառով:

7. 10-րդ մասի “զ)” կետը “երեխայի” բառից հետո լրացնել “կամ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի” բառերը:

ՀՈԴՎԱԾ 12. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում “մեկ տարվա” բառերը փոխարինել “12 ամիսների” բառերով:

ՀՈԴՎԱԾ 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Ամփոփաթերթիկ
ՀՀ Ազգային Ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված
««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաթեթով՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», “Հայաստանի փրկարար ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի) կապակցությամբ առաջարկությունների

առաջարկության հեղինակ	հոդված	բովանդակություն	եզրակացություն
««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 8, Օրենքի 19-րդ հոդված	Օրենքի 19-րդ հոդվածի «“դ)” կետի» բառերը փոխարինել «“դ) և դ1)” կետերի» բառերով:	Ներառված է, պայմանավորված է 19-րդ հոդվածը նոր կետով լրացնելու հետ
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 9, Օրենքի 22-րդ հոդված	Օրենքի 22-րդ հոդվածի՝ 1-ին մասի գ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) տեղեկանք ընտանիքի գտնվելու վայրում (հասցեում, կացարանում) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված բոլոր անձանց մասին». 1-ին մասի գ) կետը “մահացած երեխայի,” բառերից հետո լրացնել “մյուս երեխաների, չափահաս զավակների” բառերով.	ներառված է, ապահովում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, ինչպես նաև լուծում է իրավակիրառական պրակտիկայի շրջանակներում առաջացած որոշ խնդիրներ
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 10, Օրենքի 23-րդ հոդված	Օրենքի 23-րդ հոդվածի. 1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. “Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ (այսուհետ՝ երեխայի խնամքի նպաստ) ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող)՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը:”.	ներառված է, լուծում է իրավակիրառական պրակտիկայի շրջանակներում առաջացած որոշ խնդիրներ
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 11, Օրենքի 24-րդ հոդված	Օրենքի 24-րդ հոդվածի՝ 1. 1-ին մասի “գ)” կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) տեղեկանք ծնողի գտնվելու վայրում (հասցեում, կացարանում) բնակչության պետական ռեգիստրում մինչև 2 տարեկան երեխայի հաշվառված լինելու մասին». 2. 1-ին մասի “դ)” կետում «աշխատավայրից» բառը փոխարինել «գործատուից» բառով. 3. 1-ին մասի “դ)” կետից հետո լրացնել նոր “դ1)” կետ հետևյալ բովանդակությամբ. “դ1) երեխայի խնամքի նպաստ ստացող ծնողին՝ իր կրտսեր հաջորդ (այսուհետ՝ կրտսեր) երեխայի համար երեխայի խնամքի նպաստ նշանակվելու դեպքում՝ տեղեկանք գործատուից՝ կրտսեր երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողին տրված, ժամանակավոր	ներառվել է, ապահովում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի կիրառումը և հստակեցնում է փաստաթղթերի ներկայացման ժամկետներ, սահմանում է տեղեկատվության հավաքագրման արդյունավետ մեխանիզմ

		անաշխատունակության թերթիկով վավերացված, ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի մասին.”. 4. 4-րդ մասից հետո լրացնել նոր 4.1 մաս հետևյալ բովանդակությամբ. “4.1 Երեխայի խնամքի նպաստ ստացող ծնողի՝ կրտսեր երեխայի համար երեխայի խնամքի նպաստը նշանակվում է կրտսեր երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողին տրված, ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված, ժամանակավոր անաշխատունակության օրացուցային վերջին օրվա ամսվան հաջորդող ամսվա մեկից:”. 5. 7-րդ մասում «տեղեկանք բնակության վայրից և աշխատավայրից» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասի գ) և դ) կետերով նախատեսված տեղեկանքները» բառերով. 6. 10-րդ մասի “գ)” կետի “աշխատանքի վերադառնալու” բառերը փոխարինել “աշխատելու” բառով: 7. 10-րդ մասի “զ)” կետը “երեխայի” բառից հետո լրացնել “կամ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի” բառերը:	
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 13	Նախագծի 13-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «ՀՈԴՎԱԾ 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:»	հստակեցվել է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը
«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:»	հստակեցվել է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը
“”Հայաստանի փրկարար ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:»	հստակեցվել է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը